

կը գրէ նաեւ Արհի. Քիերեմովիչի. «Յոր-
դորէ հայերը որ չհաւատան սուտերու, եւ
վստահ ըլլան որ հոս սեւէ մէկը չի խորհիր
բռնաբարել իրենց առանձնաշնորհութիւն-
ները, որոնք, ինչպէս էին մինչեւ ցայժմ,
նոյնպէս անվթար պիտի մնան յետագա-
յին» (18) :

Մինչ այդ Թորոսովիչ կ'աշխատի մի-
ջամտութիւններով յանձնարարականներ ըն-
դունիլ Ս. Քահանայապետին եւ Լեհաս-
տանի նորընտիր Թագաւորին՝ Korybut
Wisniowieckiի մօտ : 1669ի Օգոստոսի ըս-
կիդները Լեհաստան կը գրկէ իր հետե-
ւորդներէն մաս մը, եւ կը պատուիրէ իր
եղբորորդւոյն եւ իր մատրանապետին Տէր
Յովհաննէս Պեռնարտովիչի, որ ջանան հայ
երեսփոխաններուն, նոր Թագաւորին ու
մայր Թագուհիին եւ իշխաններուն մօտ մի-
ջամտութիւններ ապահովել իր վերադար-
ձին համար : 6 Սեպտեմբեր 1669ին հայ ե-
րեսփոխանները Ս. Ժողովին կը գրեն խնդ-
րելով որ իր Թեմը վերադարձնէ Թորոսովիչ
Արքեպիսկոպոսը. նոյն խնդրանքը կը կա-
տարեն Ռուսիոյ պալատական դատաւորնե-
րը, 7 Սեպտեմբերին : Ի լուր այս միջա-
մըտութիւններուն, Առաքելական նուիրակը
Մարեսպոզիի, կը գրէ Թագաւորին եւ մայր
Թագուհիին, որ Թորոսովիչ Արքեպիսկո-
պոսին վերադարձը չխնդրեն Ս. Քահանա-
յապետէն, որովհետեւ Նորին Սրբութիւնը

(18) Sac. Gregorio Petrowicz, Ibidem,
225—248: